

8 (257).

Նուր, նուր թակավոր,  
Վանահ - գարմիր շնավոր,  
Հրոյին, թանին էծնութուն,  
Մարտու մահին՝ թանգութուն:

9 (258).

Նուր, նուր, նորավոր,  
Վանաչ - գարմիր շնավոր,  
Կոճոճ էլավ կուղէ վիս,  
Կդրէ թալէ՝ չուղէ վիս:

10 (259).

Նուր, նուր, հայեմ քեզ,  
Բուսգա շորեր կարեմ քեզ,  
Հուլ - օրոհիկ շարեմ քեզ,  
Լուսնագ նորէ՝ հանեմ քեզ:

11 (260).

Տիւ, տիւ,  
Լուկեն վիւ՝  
Ակլատիւ:

12 (261).

Ծծում, ծծում, հա՛ ծծում,  
Դանիւմ պերիւմ, զմպցում,  
Անուշ գարակ հրսպցում,  
Աիփանիզին՝ գերսպցում:

13 (262).

Տերնոյեզ,  
Դարման ու կես,  
Առնիւմ չվան՝  
Ընզնիւմ դեզ:

14 (263).

Տերո՛ յառ էղնի,  
Տու՛ րոչառ էղնիս,  
Մայրգը սրդով,  
Արևագնքով:

Դ

ՎԻՊԱՊԱՏՄԱԿԱՆ.  
ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅԲԱՐԻ ԵՎ  
ԶԻՆՎՈՐԱԳՐՄԱՆ ԵՐԳԵՐ

1 (264). ՀԱՍՏԱՆ - ԿԱԼԱ

Անդեր մներ Հըսըն - կըլեն.  
Հըսըն - կըլի տուսը պացին,  
Կամընդաղն էր գերմանացին,  
Խեղջ հայեր՝ նստան լացին:  
Հըսըն - կըլի պերտն էր ամուր,  
Պարիսպ ուներ, բողբոջ տուր,  
Մոդով գանցներ Արապի ճուր,  
Խեղջ հայերուն՝ քաշեց զուր փուր:  
Անդեր մներ Հըսըն - կըլեն,  
Սադգե՛ր Էնվեր փաշի բայեն,  
Յարս ի դուն՝ չմներ լայեն,  
Վերան տառներ Հըսըն - կըլեն:  
Հըսըն - կըլեն քար ու քոռ,  
Թուպերն արյան մեճ գփոփոռ,  
Միրդս յարող՝ գմոմոռ:  
Անդեր մներ Հըսըն - կըլեն,  
Սադգե՛ր Էնվեր փաշի բայեն,  
Յարս ի դուն՝ չմներ լայեն:  
Վերան տառներ Հըսըն կըլեն:  
Հըսըն - կըլեն պարծր սար էր,  
Շուրջ ու պուրո՛ մարմար քար էր,  
Մեճ գուվողներ՝ պուրո հայ են:  
Անդեր մներ Հըսըն - կըլեն,  
Սադգե՛ր Էնվեր փաշի բայեն,  
Յարս ու դուն՝ չմներ լայեն,  
Վերան տառներ Հըսըն - կըլեն:  
Հըսըն - կըլեն ջամպեն դուզ էր,  
Սրպրումի օամպեն դուզ էր,  
Շուն օսմանցին՝ փախչել գուպեր:  
Անդեր մներ Հըսըն - կըլեն,  
Սադգե՛ր Էնվեր փաշի բայեն,  
Յարս ի դուն՝ չմներ լայեն:  
Վերան տառներ Հըսըն - կըլեն:

2 (265). ՀԱՍՏԱՆ - ԽԱԼԱ

2

Հասան - խալեն քար ու քոռ,  
Թուպերը մեջ կգուգոռ,  
Յարս սիրդս՝ գմոմոռ,  
Վերան առունա Հասան - խալեն:  
Հասան - խալի ջուրը պաղ էր,  
Մայրը գիղեր որաին սաղ էր,  
Վերան տառնա Հասան - խալեն:  
Հայրս, մայրս թունդրան բոցին,  
Գերդեստանիս ծեռն՝ իր ծոցին,  
Նորամանուզն օրորոցին,  
Վերան տառնա Հասան - խալեն:  
Մդա դիրքը, տեղս թաց էր,

Քամին պարզեց՝ վերքս բաց էր,  
Վերան առոնա Հասան - խալեն:  
Այս էր սեր տիրոջ խնտիրո,  
Չորս եղբարով մղանք դիրքո,  
Մրշակ եղբայրն առավ գիրկե,  
Թոհի՛ր նամագ, հասի՛ր հորս,  
Լա՛վ գալադմես ծնող մորս,  
Հասբույր կուդաս սենչ եղբորս,  
Թոհի՛ր, նամագ, վիրավոր եմ:

3 (266). ՍԱՍՍԱ ԼԵՌՆԵՐՈՒՄ

Սասնա լեռներում՝ պինված ութ մանուկ,  
Իրենց խմբապետ՝ Գուրգեն և Ռուբեն,  
Սասնու ելնելով՝ պենքեր վերցրին,  
Մինչև մայիսը գյուղեր ման գալով:  
Օրը հինգշաբթի, Յրոնք գյուղ հասան,  
Տղայոց խումբը մարկի մեջ մտան,  
Էդ գյուղի քոխվեն մներ մուսուլման,  
Յուր երկու որդին՝ վալուն լուր տարան:  
Այդ որ լսեցին՝ խող, գապ բերեցին,  
Մարկի չորս կողմը՝ կրագ վառեցին.  
Ռ՛վ հայեր, հայե՛ր, հասեք օգնության,  
Գուրգեն կ՛կոժի ի սեր հայության  
Ռուբեն կպոհվի ի սեր հայության:

4 (267). ԽԱՊԵՑ - ԴԱՐԱԿ

Խապեց - դարավ շուն Հովակիմ՝  
Մողեցույ Բաղեշ քաղաքին,  
Լուրեր տվեց ժամանագին,  
Կնայ պաղմեց Լիվա փաշին:  
Լիվա փաշան ըսկըր հանեց,  
Մարեր - չորեր ծածկեց ըմեն,  
Գյուղեն էլավ ցան ֆիդային,  
Ժողովուրտ թափավ թամաշեն:  
Գիլան, կոզբան ողջ ժողովուրտ,  
Սստվաչ իղեր ն՛ սեր, ն՛ գութ,  
Մարեր - չորեր՝ ըսկըր և քուրդ:  
Տասնհինգ օրվա լուսնագին,  
Մեր չորս բուրդ՝ ըսկըր բաղին,  
Օուխ ու դուման մեճ կրագին,  
Ջըրգե՛ք տղե՛րք՝ ժամանագին:  
Կարաբեդ շալգեց Օվանես,  
Արյուն թափավ ըսեպ - ըոեպ,  
Տարավ դրեց մեճ խողի դեպ,  
Թոփչուն պարզեց՝ քաջ մարաու բես:

5 (268). ԲԱՂԵՇՈՒ ԷԼԵՐ ԷՐ

Բաղեշու էլեր էր,  
Մըր սալքխ՝ Մուշ առեր էր.  
Յրոնքի թևով իճեր ինք,  
Մրկե մարագ մղեր ինք,  
Մարկի մեճ հանգստեր ինք:  
Աբրի կոտի սև Ռուպեն՝  
Չուբրի Յրոնքի սև Ալեման:  
Ող շուն շանորտին՝ անօրինի նման  
Հեծավ պրոպ ծին, իճավ Զուրդստան,

Գաբին սանդուխնին, պերեցին էգան:  
Մարկի չորս կողմը՝ նուր պած արեցին.  
Գալու վորեն ցանեցին:  
Աբրի կոտի սև Ռուպեն,  
Մեր տոներից հեռացույ,  
Շուն տաճգի ծեո՝ պոնցույ,  
Վանքի վրավեն՝ ցած իճույ:  
Ինն կացիր, միննագ էգար,  
Ինճո՛ւ աու միննագ էգար,  
Զաքեր գործցիր՝ էգար,  
Չաչքեր քոոցիր՝ նոր էգար:

6 (269). ԻՆՉ ԻՄԱՅԱՎ ՉԱՐ ԹՇՆԱՄԻՆ

Ինչ իմացավ չար թշնամին  
Լուրն է եկել Փայունին՝  
Թող կը հըսնի յուր խուսպին:  
Զուման էգան Խաթաբեն.  
Պատերապմ էր հայ ազգին:  
Հայրիգա բես հայր ունիմ,  
Մայրիգա բես էլ չունիմ:  
Մշու էրգիր՝ հայր ունիմ,  
Մշու էրգիր մայր չունիմ:  
Մի վախենաք, օ՛վ հայեր,  
Հիսուսի բես՝ դեր ունիմ:  
Երբ աղոտրան պածվեցավ,  
Սոաքել՝ հերոսացավ,  
Զեռքին շարժեց մուսենին,  
Բոթոց վանքին էլ՝ բաղչավ:  
Պարոն գաննավ վըր նավին,  
Նշան պոնեց վըր ջագաին,  
Ջըրգույ, գործույ բինբաշին.  
Պարոն գաննավ խումբապետ,  
Աշեցե՛ք սուրպ Կարապետ:

7 (270). ԱՆՍԱՍ ՄՆԱՅ

Անմաս մնայ փորրիկ գավաո,  
Ավեղիս գանճեց՝ Մուրաղ եղբա՛յր,  
Դուն ալ գիտես իմ նրաղագ,  
Զաջ Ավեղիս մնայ անջար:  
Ռաժանորտին մըճ աշխարկիլև,  
Լ՛ի տմացան Սրղայ վանքին,  
Խըբար Էնեք իմ հայրգան,  
Չանաբարին պիս խապեցին,  
Կացին, կեղեն տուրս հանեցին,  
Հարսանեզին պիս գանճեցին.  
Պարոն Մուրա՛ղ, դուն ալ գիտես,  
Թըլըք սարկին, Սարգիս խապին:  
Յրս Ավեղիս՝ Կըսպո ցեղեն,  
Ոնգերներով նստանք սեղան,  
Չերանք - խամինք իբրև պայման,  
Չընըբարին՝ դարչանք դուշման:

8 (271). ՄՒԼԸ, ՄԱՅՐԻԳ

Զոճեր էգան մրմսալեն,  
Ազուպն էգավ բոորոալեն,  
Մ՛ի՛լը, մայրի՛գ, յըս մինագ չիմ,

Մի՛լը, հոկի՛ս, սառնարուն չիմ:  
Մասնու սարեր պուսե՛ գագաջ,  
Դըլու սարեր պուսե՛ գագաջ,  
Պարոն գորեց՝ թտ հատ անգաջ:  
Մի՛լը, մայրի՛գ, յոս մինազ չիմ,  
Մի՛լը, հոկի՛ս, սառնարուն չիմ:  
Մասնու սարեր սոխն ու խաղող,  
Դըլու սարեր սոխն ու խաղող,  
Խըլիլի վիւ՛կ՝ Մերոբին վոխ  
Մի՛լը, մայրի՛գ, յոս մինազ չիմ,  
Մի՛լը, հոկի՛ս, սառնարուն չիմ:

9 (272). ԱՄՍ. ՀԱՅԱՍՏԱՆ

Մ՛խ, Հայաստան, քան Հայաստան,  
Մրա՛գ, քեզի մաղաղ լինեմ,  
Մէզ ճանապարհ քեզից գուպեմ:  
Մրազ ընչի ճամպա տվեց.  
Մնցա ես ու ետ գնացի,  
Մն սարին էլ հանդիպեցի,  
Մն սա՛ր, քեզի մատաղ լինեմ,  
Կորույցել եմ մանգիզներս,  
Չգիտեմ ո՞րման ես գնամ:  
Մն սար ընչի պատասխանեց.  
- Բու մանգիզներ՝ Շովասարի  
Լանջի վրա նստած են:  
Մնցա ես ու վեր գնացի.  
Շովասարին հանդիպեցի,  
Շովասա՛ր, քեզ մատաղ լինեմ,  
Կորույցել եմ մանգիզներս  
Չգիտեմ ո՞րման ես գնամ:  
Շովասարն ինչ պատասխանեց.  
Բու մանգիզներ Շովասարի  
Լանջի վրա նստած են:  
Շովասա՛ր, քեզ մատաղ լինեմ,  
Շովասա՛ր, քեզ մատաղ լինեմ,  
Իմ մանգիզներ՝ քեզ ամանաթ լինեն,  
Իմ մանգիզներ՝ քեզ ամանաթ լինեն:

10 (273). ԱՄՍ. ՀԱՅԱՍՏԱՆ

1

Նրաղագին Ասուն մենյան,  
Թող պիս հանին, ա՛յ, կախարան:  
Կախարանեն խեխտվաչ չայնով՝  
Պիաի գոչենք՝ ա՛խ, Հայաստան:  
Մ՛խ, Հայաստան, սիրդս ու հոկիս,  
Բեզ նվիրեմ, ընտունե՛ պիս:  
Թեզ գարելի՛ յոս գու մեռնիմ,  
Թող Հայաստան լուսավորվի:  
Դրոշագներ ծածուկ - ծածուկ,  
Նորեն զիկեր հայ թակավոր,  
Թագն կլուխ, սուրն չեռքին  
Չորք էղենն, չագ էրգաթին՝  
Ակունք ուներ խա՛ջի նման:

11 (274). ԱՄՍ. ՀԱՅԱՍՏԱՆ

2

Մ՛խ, Հայաստան, սիրդս ու հոկիս,  
Բեզ նվիրեմ, ընտունե՛ պիս,  
Թե՛ գարելի յոս գմեռնիմ՝  
Թող Հայաստան լուսավորվի:  
Մ՛խ, երբ գուկա հայ թակավոր,  
Թագը գլխին, աւրը չեռքին,  
Չորքն էղենն,  
Դրոշակներ ծոծա՛ն - ծոծա՛ն:

12 (275). ԱՌԱՔԵԼ. ՄՈՒՇԵՂ

1

Առաքել, Մուշեղ լեռներից իջան,  
Ավերազ ճաղայ, ախպեր քան, օթևան էղան:  
Առաքել կանչեց՝ Մուշե՛ղ, ի՛մ եղբայր,  
Դուն հանգիստ կաց, օվ ախպե՛ր քան,  
Չենքին՝ չեռք մի՛ տար:  
Ես պետք է ցրիմ՝ թուրքերու գումար:  
Լեռներ ու քարեր թուր դարչան մարդ,  
Ավերազ ճաղայ, ախպեր քան,  
Օգնեց մեզի շաղ:

13 (276). ԱՌԱՔԵԼ. ՄՈՒՇԵՂ

2

Առաքել, Մուշեղ լեռներից իջան,  
Ավիրազ ճաղաչ, հոկի քան, օթևան դարչան,  
Դե՛ վարգե՛ք, վարգե՛ք, վարգեցե՛ք քաջ, քաջ  
Դիրոն սուրպ գամքով, հոկի քան,  
Մենք կերթանք առաջ:  
Առաքել գանճեց՝ Մուշե՛ղ, ի՛մ եղբայր,  
Դուն պետք է լինես, հոկի քան, հայ ազգին պաշտպան:  
Դե՛ վարգե՛ք, վարգե՛ք, վարգեցե՛ք քաջ, քաջ  
Տիրոն սուրպ գամքով, հոկի քան,  
Կերթանք մենք առաջ:  
Մշու սարերուն իճել էր գարգուղ,  
Սերոպ գգանճեր, հոկի քան, չկար քայոյ օգուտ:  
Սերոպ գգանճեր, հոկի քան, չկար պորություն:  
Դե՛ վարգե՛ք, վարգե՛ք, վարգեցե՛ք քաջ, քաջ  
Դիրոն սուրպ գամքով, հոկի քան,  
Մենք կերթանք առաջ:

\* Առաքելը՝ «ատյուծ Արարոն» ծպտված շրջում էր հայկական գյուղերում և ահ ու սարսափ տարածում թուրքերի ու քրդերի մեք: Նի անգամ ծպտված, մուրացիկի տապալկը ուսին՝ մտնում է մի գյուղ և լսում, որ մոտակա հարսանքատանը սուգ է, հարսանքավորները սգի մեք են: Հարցնում է պատճառը և իմանում, որ թուրք բեզը իր թիկնապահ վեց զինվորների հետ՝ պետք է իջի առաջին գիշերվա իրավունքը: Արարոն մտնում է մինչև նրանց գալը: Բռնում է հարսի թևից և մտնում այն սենյակը, ուր սպասում են թուրք իտուժանները, վեցի գլուխը կտրում է, իսկ բեզը տեսնելով նրա ջլապիճը մարմինն ու գորությունը՝ տեղն ու տեղը լեղապատատ է լինում և մեռնում: Երբ թուրքերը իմանում են, որ բեզը գնաց և չվերադարձավ, 700 զինվորներով շրջապատում են գյուղը, իսկ Արարոն փախչում և դիրք է բռնում ավերակ ջրաղացում՝ իտուժապի մատնելով բշտամուն (օան քանասացի):

Առաքել, Մուշեղ լեռներույ իճան,  
 Ավերազ ճաղայ, հոգի քան, էդան օթևան,  
 Առաքել գանճեց՝ Մուշեղ, իմ եղբայր,  
 Դիրոճ սուրպ գամքով, եղբայր քան,  
 Մենք գերթանք առաջ:  
 Դե վըրգե՛ք, վըրգե՛ք, նշան ի ճաղայ,  
 Չորս հարյուր հուզի, եղբայր քան, էնեցինք սողազ:  
 Ավերազ ճաղայ օգնեց մըպի շաղ,  
 Ավերազ ճաղայ, եղբայր քան, օգնեց մըպի շաղ:  
 Դե գովեք, գովե՛ք նշան ի փաշեղ,  
 Դե վըրգեք, վըրգե՛ք նշան ի փաշեղ,  
 Մուլան էգավ, դե՛ս, եղբայր քան, չուղը վճվածեղ:  
 Դե վըրգե՛ք, վըրգե՛ք, վըրգեցե՛ք քաջ, քաջ  
 Դիրոճ սուրպ գամքով, հոգի՛ քան,  
 Մենք գերթանք առաջ:

15 (278). ԽՆՈՒՄԻՑ ԳԱԼՈՂ  
ՉԻՆՎՈՐՆԵՐԸ ԲԱԶ

Խնուսից գալող հայ պինվորները քաջ,  
 Արյան դաշտից եկած և պարտաճանաչ,  
 Հին, հին վրեժ լուծել՝ լեռնայավ պահանջ,  
 Բաջի պես վապեցին թշնամյաց առաջ:  
 Մոտ թվով տասնչորս և իրենք անվախ,  
 Տիգրանն էր դեկավար, գործում էր անկախ,  
 Անվախ առյուծ Մուշեղ և Մելիք,  
 Համսպասպ, Մարաիրոս, կանգնած էին դիրք:  
 Թաթոն ընտրեց՝ Միսակ, Մուսոն ու Մխիկ,  
 Արանք անվանվեցան՝ խմբեր թոուցիկ:  
 Խարբերդի դիրքերումը սյուտ անքուն,  
 Այրեցին, քանդեցին անգութ մուլի տուն:  
 Վրաստանի շքեղ Թիֆլիս քաղաքը,  
 Չէր ճանաչում, կանխավ, իրա որդոցը,  
 Երբ նրանք մեղավոր թաղում կանգնեցան,  
 Թիֆլիսի հայերը շաղ ուրախացան:  
 Թեև քաջ Մուշեղին նրանք պոհ տվին,  
 Բայց անգութ թշնամուն՝ խիսա ջախջախեցին,  
 Եղավ ապատության գրավականը,  
 Նրանք պաշտիվ տվին՝ հայ ապգությանը:

16 (279). ՊԱՐԾԻՐ ԱՂԲՅՈՒՐ

Պարպի՛ր աղբյուր, պարպի՛ր, պարպի՛ր ջուր դանիմ,  
 Բեզի դղեն չարավել է, ջուր դանիմ:  
 Աղբյու՛ր, գիտե՛ս, սովն է քաղել մըր աշխարհի,  
 Ախ, գուլում, գուլում, գուլում քաղեց մըր աշխարհի:  
 Կար ժամանակ, որ մենք էլ հարուստ էինք  
 Մըր սեփական դուն ու դեղը ունեինք,  
 Մըր սեփական հացն ու ջուրը ունեինք:  
 Աղբյուր, գիտե՛ս, քեզը մկի չէր սիրէ,  
 Գհալաչեր, գթալաներ, գսպաներ,  
 Գհալաչեր դուն ու դեխից գիաներ:  
 Դե շուտ պարպի՛ր, պարպի՛ր մաքուր ջուր դանիմ,  
 Բեզի դղեն չարավել է, ջուր դանիմ:

Պարպի՛ր աղբյուր, բեզի դղին ջուր դանիմ,  
 Ա՛խ, պարպի՛ր, պարպի՛ր, խան Մուրադին՝ ջուր դանեմ:  
 Աղբյուր գիդե՛ս քեզը մեկի ի՞նչ գանե,  
 Ա՛խ, գթալանե, գկողորդէ, գսպանե:  
 Կար ժամանակ, որ մենք էլ հարուստ էինք.  
 Մեր սեփական դերությունն ունեինք,  
 Մեր սեփական դուն ու դեղը ունեինք:  
 Գահ ու փառքից, ապաղ կյանքից պրզվեցանք,  
 Ա՛խ, արյունարբու օսմանցու չեռ մաղնվեցանք:  
 Աղբյու՛ր, հիմա սեն է քաղել մեր աշխարհի,  
 Չուլում, գուլում, քաղո ու սարսափ ու խավար,  
 Դե՛, շուղ պարպի՛ր, բեզի դղին ջուր դանեմ,  
 Ա՛խ, պարպի՛ր, պարպի՛ր, հայ քաջերին՝ լո՛ւր դանեմ,  
 Ա՛խ, պարպի՛ր, պարպի՛ր, Անդրանիկին՝ լո՛ւր դանեմ:

18 (281). ՄԳՐՈՅԻ ՄԱՐԸ\*

Հունիսի դասնչորսին,  
 Երբ որ նստած աթոռին,  
 Գիրկն առած վճարիգ որդուն,  
 Հըվար էգավ Մգրոյին\*\*:

Երբ հըվարի յայն լսեց,  
 Յուր քաղցր որդուն յգեց,  
 Յատկիլով՝ կենքի գաբեց,  
 Դեքի՛ Դալվորիգ վապեց:

Հըվար արեք զըլեցոց,  
 Թող շուղ հըսին դալվորցոց,  
 Չըրգին, գողրին քազրանցվոց,  
 Հիշադագ մնա հայոց:

Երբ զըլեցիք լսեցին,  
 Թե Մգրոյին սպանեցին,  
 Գրգելով վճարիգ որդուն՝  
 Նստան, միասին լային:

Օվ իր ազգի դեմ գոհվի,  
 Արժանի է մեծ փառքի,  
 Ինչպես Բողո և Խաչո,  
 Ըոքէ Արե և Խաթո:

19 (282). ԵՐԲ ՉՈՒՆԻՆԸ ՀԱՆԳԻՍ\*\*\*

Երբ չունինք հանգիստ, ի՞նչ գանինք պվաստակ\*\*\*\*,  
 Ի՞նչ պանանք ժամիր, Ներսես քան, խաչն էր որքի դագ:  
 Տարոն ավրվավ, Մուշ տառավ խոպան,  
 Ըդ աաշաի հայեր, Ներսես քան, քաղեց մըժ, դուման:  
 Տարոնու հարսներ՝ գուսանք և փափուգ,

\* Երգասաց՝ Տիգրան Տարոնի Դովսեփյանը (25 տ.), ծնված Թալինի շրջանի Զովասար (Ահազի) գյուղում, ժող. երգի լավ կատարող է, ունի հնչեղ ձայն, լավ է պահպանել Գրիգոր պապից սովորած երգի մեղեդային նրբություններն ու վիրրացիան (Ծան. կազմողի):

\*\* Տնեթի վերջին երկատողերը կրկնվում են (տե՛ս նոտագրությունը):

\*\*\*Երգը Մշո թեմի առաջնորդ Ներսես Դարախանյանի մասին է:

\*\*\*\* Սկզբում կրկնվում է առաջին տողի վերջին ռիթմաճառը, այնուհետև՝ երկրորդ տողն աճրողությամբ (տե՛ս նոտագրությունը): (Ծան. կազմողի):

Մշու գորյուններ, Ներսես քան, սներ են հակուզ:  
Մըր ջոջ պասքերան՝ փեղդվարի ութ,  
Էրգինք մեզ վրա, Ներսես քան, արգեյ սն գարգուզ:  
Գելիեգուպան գյուղ Հայաստանյայ սուն,  
Օգոստոս՝ վառվա՛մ, Ներսես քան, էոսուն հապար դուն:  
Ներսես՝ս, մըր աքով մ'գինը մըլուլ,  
Մենք միշտ գաշխաղինք, Ներսես քան, արթուն ու սլուլ:  
Խիրազ չմնայ, ժամիր թամվան,  
Քվի լը դարան, Ներսես քան, մըզ ըլ ի՞նճ մնայ:  
Սոաքնորդարան՝ անդեր և փագուզ,  
Շդ տաշաի հայեր, Ներսես քան, գաքեր են սն սուզ:

20 (283). ՍԵՆՔ ՍՐԴՈՎ ԳԴՐԻՃ ԻՆՔ\*

Մենք սրդով գորյուն ինք ու բաժով՝ պարթև,  
Ունինք հաստ - հաստ թևեր, գվապինք թեթև,  
Հերոսության մեն՝ մըր սիրդ գհալի,  
Մպի դվեք, հայե՛ր, մեզ - մեզ սուրմալի:  
Մենք քար գհալցունք, ճուր տառցունք էրգատ,  
Ափսոս չի՞նք, մնանք վաղ տաճկին հքադագ:  
Հերոսության մեն՝ մըր սիրդ գհալի,  
Միայն թը դվեք մեզ՝ մեզ - մեզ այնալի:  
Անդոք, Ձովասար, Կեփին, Մըրըթուզ,  
Գզանճին՝ հըր ե՞պ սեռուզ մենք տուք,  
Քեպրանք նստելով, մենք գսիվ գուպինք,  
Միայն թե հայե՛ր, դվեք մպիզ պենք:  
Շըր մըր առճնեն գփախնի կըք գադու՝  
Ափսոս չի՞նք, մնանք տաճգին հարգադու:  
Մրդերս չէ վաղ, քաջ դղերք գան շաղ,  
Ունինք հույս, հավաղ, օրի՞ չինք ապաղ:  
Մըր սուրպ Մըրքփեն՝ էղնի չեզ վգա,  
Աշխարհ կըք մպի՝ գորիճ մարտ չկա:  
Հանտե՛ գզանճինք, առաճ գվապինք,  
Շուղով մըր վպեն լուչ, շոթա խպինք:  
Անոթի, չառավ. ա՛դ լը չմնայ,  
Արմադ գ՛գրչինք, չընք ուվի մենք հայ,  
Միայն թե դվեք մեզ՝ մեզ - մեզ չագ էրգատ,  
Չնդով մենք Սասուն ու վՄուշ գըզըղինք:  
Միայն թե դվեք մեզ, եղքայրնե՛ր, մեզ - մեզ չտգ  
էրգատ,  
Չնդով մենք Սասուն ու վՄուշ գըզըղինք:

21 (284). ԵՍ ՀԱՆԵՅԻ ՍՈՒՐ ՊԱՏՅԱՆԻՑ

Ես հանեցի, սուր պառայանից,  
Սրտասուքովս օծեցի,  
Աստված սիրեք, հա՛յ աղջիկներ,  
Արեք խորհե՛նք միասին:  
Սյուհեան ալ չսիրենք  
Գովից փախչող վախկուտին,  
Խիստ պզվելի կերպով նայենք,  
Փողի սիրով՝ մեռնողին:  
Համբույրի աեղ՝ թույն կամենանք

\* Երգասաց՝ Ռաֆիկ Առաքելյան, Ձովասար < Գելիեգուզան: 1904թ. Ձայի ծակատանարտում՝ Սասնա հերոսուհի Հավսեն իր որդիներին կռվի էր առաջնորդում՝ այս երգի խոսքերով: (տես Գ. Պողոսյան, Սասունի պատմություն, Երևան, 1985, էջ97): (Ծան. կազմողի):

Թուրքից վրեժ չառնողին:  
Տիրանի պես քաջ եմ սիրել,  
Արժանի է մեր սիրուն,  
Նրանք գլուռեն սիրով պահել,  
Կին՝ չհանչեն թուրքերուն:  
Բաքենիկիս ոտքով գորրիմ,  
Վառող գմաղիմ՝ ծեռներով,  
Չար սուլթանի հե՛դ գործ ունիմ  
Դեռ Սասուն չէ՛ արքահով:

22 (285). ՍԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆԸ ԳՈՒԼԱՐ  
ՍԳԱԿՈՐ

Մայր Հայաստանը գուլար սգավոր,  
Թշվառ, ոանակոխ այսքան դարեդար,  
Արյունով ներկված լեռներ, դաշտ ու չոր  
Իմ սրտին դիպավ ցավեր խոցավոր:

Թող փայլե՛ Տարոն՝ դվաչ քաջերով,  
Չինված, քաղրասավաչ մուսենիներով,  
Տարոն - Մուշ գավառ արյուն գիոսեր,  
Հայրենիքը մեզ՝ պենքի՛ գ՛զանճեր:

Այդ պաղմեց գարուն, գարուն վարդաքեր,  
Թնդայ Մուշ - Տարոն, Նեմրութ ու Սասուն,  
Տարոն - Մուշ գավառ արյուն գիոսեր,  
Հայրենիքը մեզ՝ պենքի՛ գ՛զանճեր:

23 (286). ԴԱՐՉՅԱԼ ՓԱՅԼԵՑ

Դարչյալ փայլեց Սասնո գլխին  
Ապառության դրոշակ.  
Կեցցե հայրենիք գոչելով՝  
Բարչրայրեցին աղաղակ:

Թնդայ, որոաայ չայներիցը  
Ողջ աշխարհը հայկական,  
Խուճք - խուճք կպամած՝ հայ պավակներ,  
Հասնում էին օգնության:

Գուրգեն, Վահան, Հրայր - Դոճխք  
Քաջ Մնդրանիկ ղեկավար,  
Տավրոիկի լեռներումը՝  
Շրջում էին անդադար:

Միա անգութ թուրք ու տաճիկ,  
Մարսափելի տեսարան,  
Ժամանակն է՝ վրեժ լուծել,  
Գոչեց չայնը հայկական:

Կրակ տեղայ հայ քաջերին  
Բնակավառ դիրքերից,  
Մլաղվեցին թուրք խուժաններ  
Մինչ պալատը սուլթանի:

24 (287). ԿԱՐԿՈՒՏ ՏԵՂԱՅ

Կարկուտ տեղայ Խանասորա դաշտումը,  
Ֆիդայիները դաշնակցած՝ վրեժ են լուծում հովտումը,  
- Յամա՛ն, ասավա՛ճ, ֆիդան եկավ, ո՛ր փախչեմ,  
Սսայ որդուն կրծքին սեղմած, լեղապատառ քրդուհին:

- Մի վախենա՛ր, հանգիստ եղիր, բաջի՛ ջան,  
Կանանց երթե՛ք չեռք տալու չէ վրեժխնդիր քաջ ֆիդան:  
Սոսկայ քուրդը, ընաթաթախ մազրիկցիին,  
Չէր երպարում իսպառ ջնջվել  
Արշալույսի այս պահին:  
Մի ժամվա մեջ՝ Մազրիկ ցեղը ջնջվեցավ,  
Լնանասորա կանաչ դաշտը՝  
Կարմիր գույնով ներկվեցավ:  
Չկար Կարոն, ախուր պատեց ամենքին,  
Բայ երանի նրա հոգուն, օվ գոև դարձավ այս կովին,  
Հայե՛ր, հիշե՛ր նվիրական այս օրը,  
Հուլիս ամսի քսան և հինգին՝ կատարեցե՛ր մեր տոնը:

25 (288). ՄԵՆԸ ԱՆԿԵՂԾ ՉԻՆՎՈՐ ԵՆԸ

1

Մենք անկեղծ պինվոր ենք, առանց ի վիճակ,  
Ուխտել ենք ծառայել երկար ժամանակ,  
Պարսկաստանի խորքից եկել էր նամակ.  
Գնում ենք բարով, կուշանանք աարով,  
Արյուն, սուր ու թուր, պատերազմի դաշտ՝ զսպասեն մեզի:  
Դուշման մեզի տվեց՝ ջան ֆիդա անուն,  
Սյդ անվան համաշայն, եղավ պորություն,  
Մենք չենք ուզում ազատ կամայ բռնություն.  
Ուխտել ենք կովել, այդ սիրով մեռնել,  
Համովված ենք, որ միայն պենքով կա հային փրկություն:  
Ստամբուլը պետք է լինի արյան ծով,  
Մմեն կողմից կոխվ կսկսվի շուտով,  
Պաշարենք Բաշկալը, անցնենք հեշտ կերպով,  
Սջից Վարդանը, չախից՝ Իշխանը,  
Գրավենք Աղբակ, արածենք սարսափ  
Փա՛ռք մեր բանակին:  
Դուշմանը մեզ տվեց՝ ջան ֆիդա անուն,  
Այդ անվան համաշայն, եղավ պորություն,  
Մենք չենք ուզում ազատ կամայ բռնություն.  
Ուխտել ենք կովել, այդ սիրով մեռնել,  
Համովված ենք, որ միայն պենքով կա հային փրկություն:  
Բաշկալա գավառում կրկին՝ կովեցանք,  
Ղարաբաղումը՝ պինվոր գրվեցանք,  
Կեցցե Չեյթունը, թող ապրի Չեյթուն,  
Թող իսպառ չքվի՛ թշվառությունը,  
Գրոհենք Սասուն, կեցցե հայություն:

26 (289). ՄԵՆԸ ԱՆԿԵՂԾ ՉԻՆՎՈՐ ԵՆԸ

2

Մենք անկեղծ պինվոր ենք՝ առանց ի վիճակ,  
Ուխտել ենք ծառայել երկար ժամանակ,  
Պարսկաստանի խորքից եկել էր նամակ.  
Գնում ենք բարով, կուշանանք աարով,  
Մի, արյուն, սուր ու թուր պատերազմի դաշտ՝  
կսպասեն մեզի:  
Սուլթանը մեզի տվավ ջան ֆիդա անուն,  
Այդ անվան համաշայն՝ եղավ պորություն,  
Մենք չենք ուզում ազատ կամայ բռնություն.  
Ուխտել ենք կովել, այդ սիրով մեռնել,  
Համովված ենք, որ միայն պենքով է հայոց փրկություն:  
Ստամբուլը պիտի դառնա արյան ծով,

Ամեն կողմից կոխվ կսկսվի շուտով,  
Գրավենք Բաշկալը, անցնենք հեշտ կերպով.  
Սջից՝ Վարդանը, չախից՝ Իշխանը,  
Գրավենք Հաղբակ, տարածենք սարսափ:  
Արյուն, սուր ու թուր պատերազմի դաշտ՝ կսպասեն մեզի,  
Բաշկալա գավառում այդ պատերազմին,  
Ավելի մեծ սարսափ տիրեց սուլթանին,  
Բաջ Չեյթունը Խաղթեց վարար գավանին՝  
Կեցցե Չեյթունը, խրոխտ Սասունը, մեր հայությունը,  
Փա՛ռք ու պարծանք մեր հայոց քաջ ազգին:

27 (290). ՀԱՄԱՐՈՒՐԵՅԻՆ ՀԱՅՈՅ ԲԱՋԵՐ

Համբուրեցին հայոց քաջեր,  
Հայոց քաջը՝ Անդրանիկն էր,  
Բաջ են, քաջ են հայոց պորքեր,  
Իգդիր, ասին՝ պարծր սար էր,  
Էն շուն թուրքին՝ նշանդար էր.  
Աճկով կաներ՝ մարդ գսպաներ,  
Ախճիգ անցներ՝ վայազ գաներ:  
Ալաշկերտիք պարծան՝ գային,  
Մուշ, Բղանուխ նստան լացին.  
Իրանյ մանուկներ գորչրին,  
Էս ի՞նչ պուլում դաասասան էր:

28 (291). ԱՆԴՐԱՆԻԿ ՓԱՇԱՆ

Անդրանիկ փաշան յուր ընգերներով՝  
Չինվաչ, բադրաստված մուսին պենքերով,  
Անցավ սար ու չոր յուր ընգերներով,  
Սասուն, Ախլաթ, Վան՝ տառան արյան ծով:

Ծրջում անվեհեր, փոքրիգ իմպերով,  
Չնդդեմ թշնամուն գոխվ մղելով,  
Գովում անվեհեր, գողտրիգ երգերով,  
Վրեժ առ վրեժ՝ Սերոբ հիշելով:

Ժամանագ հասավ, դե ելե՛ք, դղե՛րք,  
Մեզի գսպասե քաջ Անդրանիկը,  
Տարոն - Մուշ գավառ արյուն գհուսե,  
Անդրանիկ փաշան՝ մեզ խրախուսե:

29 (292). ԳԵՎՈՐԳ ՉԱՌԻՇԻ ԵՐԳԸ

Սոսկում, արհավիրք պաղեց Մշու դաշա,  
Կրկին առաքեց թուրք սուլթանն անհաշտ,  
Սարսափն մեծ էր, վախեցավ օսմանցին,  
Լուսմանդար կանչեց Քոսա բինբաշին:  
Հասի՛ր բանակով, արստամբ Սուլունիս,  
Սկսվեց կրակ, բարձրանալ վեր մուխ,  
Սպատ որդիներ՝ Գևորգ և Ռուբեն,  
Ինչ միջոց պետք էր՝ ի գործ պիտ դնեն:  
Ուլեցան քաշվել ի սեր գյուղացոց,  
Բինբաշին կովի փողն տլ հնչեցուց,  
Տասնյակ պաավելով՝ աղերք դիրք մտե՛ք,  
Ասաված կանչելով՝ կրակ բաց արե՛ք:  
Կորուսան մեծ էր, հաղթանակ չքեղ,  
Վերանա լինի քամբախ Սուլուխ գեղ.  
Ղարսեցի Ազոն, Կալեն Սպղանցի,

Երկու կտրիճներ՝ նահատակվեցին:  
Երկինք շնորհեց անոնց լուս պսակ,  
Մենք ալ՝ միշտ օրհնենք անոնց հիշադակ:  
Չարգվել է Ղևորգ, սարերի աւսան.  
Կռիվ սաստիկ էր, տղերք պաշարվան,  
Տանիք ընգողմած՝ Ղևորգ գնայեր,  
Չարկե՛ք անխնա, տղե՛րք, գ՛կանչեր:  
Գոռաց, որողաց սարերի աւսան,  
Յուր պենքին նայեց, մեզ ալ՝ յուր արյան,  
Վրեժ մուսենին յուր նպադագին,  
Օոնաց, վայր ընկավ Քոսա քինքաշին:  
Երբ ընկած տեղից ուկեց վեր կանգնել՝  
Հասավ Մկոյի գնդակ մահաբեր:  
Սրդաց\* սիրական, հետնն ի դարեն,  
Կանաչ դաշտի մեջ՝ Չասպար կացուցեր:  
Եվ հուսախարված քաջ ֆիդայիներ,  
Համբույրի գային Ղևորգ Չաուշին:  
Լուսին բարչրացավ դեպ երկնի կամար.  
Մշու դաշտ ախուր, արտուս կերևար,  
Մեռնի՛մ քեզ, լուսի՛ն, քու հարգ պատվազան,  
Ֆոֆոքար Սասուն, Տարոն սիրական:  
Սաչքի դուրանի ընկած քաջերից՝  
Սիրո ողջոյն աար Սնդրանիկ փաշին:

### 30 (293). ՍՈՍԿՈՒՄՆ ԱՅՎՈՐ

Սոսկումն ահավոր, սարսափն ահագին,  
Կրգին պաշարեց գահը սուլթանին.  
Ողջ թուրքութունը էղավ ահաբեզ,  
Կորուստներ կրին շատ աղա ու քեզ:  
Ռուֆադ քեզ հրարող, Մահմուդ Մեհեդին,  
Մկնիվ Մարկարի դան շուրջ բաղեցին,  
- Ո՛ւր է վրեժխնսիր Չեր Սերոպ փաշեն,  
Կաղագի չևով նրան գասեին:  
Սասնա սեզ արծիվն ի ժամ տազնապին,  
Գխորհեր անահ՝ սիգարը չեղքին,  
Երբ որ սաստկացավ տարափ գնդակի,  
Կանչեց ընգերայ՝ ի չայն, ի պենքի՛:  
Վրե՛ժ, կանչեցին ընգերք միասին,  
Չորս գողմից իսկույն ի մարտ նետվեցին.  
Մի կողմից Կալեն, Մարնկը Ռողեն՝  
Չորքի մեճ ընգաչ՝ անվեք զքաղեն:  
Մյուս գողմից Մուրադ, Մզրոն ու Մոսոն,  
Թուրքին ջարդելով՝ ջամպազ գրացեն:  
Երբ որ գիշերվա մութը ընգաչ էր,  
Ռավմազեդ Մարհադ ճամփա ընգաչ էր,  
Հարյուրքսան դիակ գեղին փովաչ էր,  
Սղթուր Սերոպի վրեժ՝ լուչվաչ էր:

### 31 (294). ԳԵՎՈՐԳ ՉՍՈՒՇԻ ԵՐԳԸ

1907 թվազանին, չքնաղ մայիսի քսան և յոթին,  
Սուզ էր քավաջխարհ՝ մահվան Ղևորգի,  
Սասնո հարապաղ մեչանուն քաջի,  
Որ գրգած հողը հայրենյաց էրգրի,  
Մոդ քսան աարի ծառայեց ապգին:  
Կովեցավ անվերջ հեղ իր դուշմանին,

Միշտ հաղթեց մեզով՝ նրանց հապարին,  
Որողաց Ղևորգ. - Անիրա՛վ դուշման,  
Էզո՛ւր, թանգ կյանքդ՝ ծախեմ շաղ էժան:  
Հարվաչն՝ խոսքից շաղ հեռու չէղավ,  
Իսկույն քինքաշին չիուց վար ընգավ,  
Ուկեցավ ընգած տեղից վեր կանգնել,  
Հասավ Մկոյի գնազ մահաբեր:  
Վերջին կռիվ՝ ալ զսպասեր քաջին,  
Պսազելու պինք՝ փառքով երգնային:  
Եվ ահա վորքեր պաշարին Սուլուխ,  
Եղաչ կռիվներ՝ ինչպես հրարուխ  
Սոաջ արշավեց Քոսա քինքաշին  
Կանչեց՝ ֆիդայի՛ք, մահն է Ձեր բաժին:

### 32 (295). ՀԱՅՈՅ ԲԱՅԵՐ

..1

Սարից վար իճան մի խումբ ընկերներ  
Մուսենին ուսին, պարտոնդաշ՝ մեջքին.  
Սրդյոք ուլքե՛ր են, ի՞նչ կորյուններ են,  
Մասիսը վկա՝ հայոց քաջերն են:  
Ղևորգ Չաուշ քաջ, Հրայր աննահանջ,  
Չարդեցին թուրքին ու անցան առաջ:  
Սրդյոք ուլքեր են, ի՞նչ կորյուններ են,  
Մասիսը վկա՝ հայոց քաջերն են:  
Դե կովեք աղե՛րք, պարգեցե՛ք քաջ - քաջ,  
Զարբարոս թուրքի կյանքին՝ դրեք խարջ:  
Սրդյոք ուլքե՛ր են, ի՞նչ կորյուններ են,  
Մասիսը վկա՝ հայոց քաջերն են:  
Սերոբն է իջնում վերին սարիցը,  
Թուրքերն են փախչում կովի դաշտիցը,  
Սրդյոք ուլքե՛ր են, ի՞նչ կորյուններ են,  
Մասիսը վկա՝ հայոց քաջերն են:

### 33 (296). ԱՐԴՅՈՋ ՌՎԵՐ ԵՆ

2

Սարերուց իճան մի խումբ չիավոր,  
Նրանց մեճ էր քաջ Սերոբն ըխտավոր:  
Լեռներուց իճան մի խումբ չիավոր,  
Նրանց մեճ էր քաջ Սերոբն ըխտավոր:  
Սրդյոք ուլքե՛ր են, հե՛յ, ինչ կորյուններ են,  
Մասիսը վկա՝ ֆիդայիներն են:  
Ողքի էր գանգնել ողջ ֆիդայուայուն,  
Սարսափը բաղեց անգութ օսմանյուն,  
Ղևորգ Չաուշն էր, ուսին՝ հրացան,  
Սնուն էր հանել՝ սարերու աւսան:  
Սրդյոք ուլքե՛ր են, հե՛յ, ինչ կորյուններ են,  
Մասիսը վկա՝ ֆիդայիներն են:  
Մայր Հայաստանը գուլար սգավոր,  
Թշվառ ողնակոխ, այսքան դարեդար;  
Արյունով ներգվեց լեռներ, դաշտ ու չոր,  
Ու սրգին դիքավ՝ ցավեր խոցավոր:  
Սրդյոք ուլքե՛ք են, հե՛յ, ինչ կորյուններ են,  
Մասիսը վկա՝ ֆիդայիներն են:  
Նորեն նոր գարուն՝ բայվի վարդագույն,  
Թնդան Տարոն, Մուշ, Սեմրութ ու Սասուն,

\* Առաղ, գյուղ Մշո դաշտուն, Առաքելոց վանքի մոտ:

Արդյոյ ովքե՞ր են, հե՛յ, ինչ կորյուններ են,  
Մասիսը վկա՝ ֆիդայիներն են:

34 (297). ՍԵՐՈՒ ՓԱՇԻ ԵՐԳԸ

1

Օվ որ քաց և, ի՞նչ գսպասէ,  
Արդեն ժամանակն է՝ թող գա՛,  
Մահ, պատերազմի օրհաս է,  
Օվ որ անվախ, քաց է՝ թող գա՛:

Կամ կռվենք, պարավենք, վերջանանք,  
Կամ՝ գենքով փրկութիւն ստանանք,  
Այս հույս ունեցողը՝ թող գա՛:

Այս մեր Սասուն, սարը՝ Սիփան,  
Կոհիվ ունինք միշտ, անխափան,  
Կռվելով փրկենք Վայաստան,  
Սպնիվ մտածողը՝ թող գա՛:

Այս հինգ դար է. մեզ գսպանեն,  
Բռնի կրոնից գհանեն,  
Մեր կին, աղջիկներ գդանեն,  
Պատիվ ունեցողը՝ թող գա՛:

Երկաթէ մարդ, քարէ հոգի,  
Վրեժխնդիր լինի թուրքին,  
Աշխույժ քարի աակ չոքի,  
Անսխալ խփողը՝ թող գա՛:

Վերջապես, մենք ունենք կռիվ,  
Պիտի գենքով մաքրենք հաշիվ,  
Մեր հայրենյաց փառք ու պատիվ,  
Սերոբ փաշին սիրողը՝ թող գա՛:

35 (298). ՍԵՐՈՒ ՓԱՇԻ ԵՐԳԸ

2

Օվ որ քաց է, ի՞նչ գսպասէ,  
Արդեն ժամանակն է՝ թող գա՛,  
Մահ, պատերազմի օրհաս է,  
Օվ որ անվախ քաց է՝ թող գա՛:

Կամ գռվենք, պարավենք, վերջանանք,  
Կամ գենքով փրկութիւն ստանանք,  
Կռվելով կռվենք, փրկենք Վայաստան,  
Սպնիվ մտածողը՝ թող գա՛:

Քուրդ ու աաճիկ մեզ ճնշում են,  
Բռնի ուժով կրոնից հանում են,  
Մեր կին, աղջիկները աանում են,  
Պատիվ ունեցողը՝ թող գա՛:

Երկաթէ մարդ, քարէ հոգի,  
Վրեժխնդիր լինի թուրքին,  
Սնվախ քարի աակ չոքողը,  
Անսխալ խփողը՝ թող գա՛:

Այս մեր Սասուն, սարը՝ Սիփան,  
Կոհիվ ունինք միշտ անխափան,  
Կռվելով կռվենք, փրկենք Վայաստան,  
Այս հույս ունեցողը՝ թող գա՛:

Վերջապես, մենք ունենք կռիվ,  
Պիտի գենքով մաքրենք հաշիվ,  
Մեր հայրենյաց փառք ու պատիվ,  
Սերոբ փաշին սիրողը՝ թող գա՛:

36 (299). ՍԵՐՈՒ ՓԱՇԻ ԵՐԳԸ

3

Օվ որ քաց է, ի՞նչ գսպասէ,  
Արդեն ժամանակն է՝ թող գա,  
Մահ, պատերազմի օրը ևսս է,  
Օվ որ անվախ, քաց է՝ թող գա՛:

Կամ կռվելով անցնինք - էրթանք,  
Կամ՝ գենքով փրկութիւն ստանանք,  
Կռվելով փրկենք Վայաստան,  
Սպնիվ մտածողը՝ թող գա՛:

Այս հինգ դար է, մեզ գսպանեն,  
Բռնի կրոնից գհանեն,  
Մեր կին, աղջիկներ գտանեն,  
Պատիվ ունեցողը՝ թող գա՛:

Երկաթէ մարդ, քարէ հոգի,  
Վրեժխնդիր լինի թուրքին,  
Սնվախ քարի աակ չոքողը,  
Սնսխալ խփողը՝ թող գա՛:

37 (300). ԷԼԻ՝ ԷԼԻ՝ ՍԵՐՈՒ ՉԱՆ

1

Ամա՛ն, էս ի՞նչ դուման է,  
Աշխարհ բոլոր դուման է.  
Հայ ազգի սիրող քար է,  
Սերոբի աչք՝ խավար է:  
Էլի՛, էլի՛, Սերոբ քան,  
Վեր կաց գայնի՛ր, փաշա՛ քան,  
Ձեռքդ ա՛ն սուր, հրացան,  
Սոսեն չէրթա գերության:  
Սերոբ էլավ գայնավ տուռ,  
Չորք հավաքեց ժամի դուռ,  
Սոսեն ասավ՝ գե՛նքս տուր,  
Կորյունն ասավ՝ սո՛ւրս տուր:  
Էլի՛, էլի՛, Սերոբ քան,  
Վեր կաց գայնի՛ր, փաշա քան,  
Ձեռքդ առ սո՛ւր, հրացան,  
Հայեր չէրթան գերության:  
Արև դիպավ սարերուն,  
Սերոբ դարան թաղելու,  
Սոսեն ընգավ չոքերուն,  
Սդի - արցունք աչքերուն:  
Էլի՛, էլի՛, Սերոբ քան,  
Վեր կաց գայնի՛ր, փաշա քան,  
Ձեռքդ առ սուր, հրացան,  
Որ մենք չէրթանք գերության:  
Երբ Սերոբին թաղեցին,  
Հայերը սուգ գաբեցին,  
Ծաղ ողբացին ու լացին,  
Ադի արցունք թափեցին:

Էլի՛, Էլի՛, Մերոք ցան,  
Վեր կայ գայնիր, փաշա՛ ցան,  
Զեռքդ առ սուր, հրապան,  
Հայեր չէրթան գերության:

38 (301). ԳԵԼԻԵԳՈՒԿԱՆ ԴՈՒՍԱՆ ԷՐ

2

Գելիեգուվան դուման էր,  
Ամբողջ Գըլին դուման էր.  
Հայ ազգի սիրույք քար էր,  
Մերո՛ք, աչքդ՝ խավար էր:

Մերոքն էլավ գայնավ առու,  
Ոսկըր լցվավ ժամու դուռ,  
Սոսեն ասավ՝ սո՛ւրս դո՛ւր,  
Սոսեն ասավ՝ պոուրքին դո՛ւր:

Մերոք չորքավ գրագեյ,  
Բայց, ավա՛ղ, նա վրիպեյ,  
Թուրքից պոզվաչ մի գնդակ՝  
Գբավ նրա կրծքի դագ:

Արև դիքավ սարերուն.  
Մերոք դարան թաղելու,  
Սոսեն ընգավ չորքերուն՝  
Բուդ - բուդ արցունք աչքերուն:

39 (302). ԱՐՄԵՆԱԿԻ ՄԱՐԸ

Մասուն գավառը լալագին,  
Նման յնառ Արմենակին\*.  
Սոավոայան ժամն էր հնգին,  
Հաշիվ չկար թուրքի պորքին:  
Թուրքի պորքը գշադանար,  
Պարոն Մուրադ գուրախանար.  
Գըսեր՝ դղե՛ք, դուք պոնեք պար,  
Յը՛ս գծարախիմ թուրքի հըպար:  
Գանճե՛ք փաշա Անդրանիկը,  
Ջըրգին պարոն Արմենակը,  
Եղավ հայոց նահաաակը,  
Թաղին Ասսուն՝ ժամու բակը:  
Գնորգ Ծաուշ՝ հաստ ու գարջ էր,  
Ոնգերներույ միշա առաջ էր,  
Մուսենին իր չեռքի իարթն էր,  
Թուրք բեգերին՝ քաջ գծարտեր:  
Գանճե՛ք փաշա Մնդրանիկը,  
Ջըրգին պարոն Արմենակը,  
Եղավ հայոց նահատակը,  
Թաղին Ասսուն՝ ժամու բակը:

\* Նույն ինքը՝ Գուրադ - Դոմիքսն էր:

40 (303). ՄՍԲԱՏ ԶՈՐԱՎԱՐԻ ԵՐԳԸ

Կովեցեք տղերք, կովեցեք քաջ - քաջ,  
Անվեհեր կանգնած՝ թշնամու առաջ,  
Այսպես հորդորեց և ընկավ տրին՝  
Թողնելով մեզի հիշատակ բարի:

Ղե՛, կովեք տղերք, մինչև շունչ վերջին,  
Արժանի լինենք փառաց պատկին,  
Այս անգամին ալ ցույց տանք թշնամուն,  
Թե ինչ է հայի ուժն ու քաջություն:

Միա թուրքերը փախչում սարսափած,  
Միա դիակներ արյամբ շաղախված,  
Կրակ տվեցե՛ք, անդադար կրա՛կ,  
Փառք մեր պենքերին, առատ է գնդակ:

Մեծ տոնախմբեր, մեր նախնի քաջեր՝  
Մեզի գսպասեն,  
Մեր սեզ եղբայրներ ահեղ կովի մեջ,  
Անման հերոս, անմոռանալի փոքրիկ Մարտիրոս:

Մեռնե՛նք հուսալով՝ մերն է ապագան,  
Մեռնե՛նք, բայց կեցցե, կեցցե Հայաստան,  
Ապատ չենք ծնվել, գեթ մեռնի՛նք ապատ,  
Բայց մեր սուրբ հոգին՝ պահենք անարատ:

41 (304). ԲԻԹԼԻՍ ԲԱՂԱՔ

Բիթլիս քաղաք՝ շատ լեռնային,  
Չկա նման քաջ Ամբատին.  
Սոավոայան արշալույսին,  
Հաշիվ չկա թուրքի պորքին:  
Թուրքի պորքեր թնդանոթով.  
Հայ տղեկներ մուսիներով,  
Ջարգին ջարտին հապար - հապարով,  
Անդրանիկ բոռաց հուռա՛ - հուռա՛,  
Անդրանիկի թուրը շողջողաց:

42 (305). ԳԵՆԵՐԱԼ ԲԱՐԱՏՈՎ

Գեներալ Բարատով Ծամվ-Հուլաք գուպեր,  
Ծանօրտի տանկներ՝ Հայաստան գուպեն,  
Տներ վառվեցավ, հողին ալ դուպ էր,  
Հաստատ, է՛ս գողորում, օր շաղ պուլում էր:  
Ո՛չ հայ մնաց, ո՛չ Հայաստան,  
Ջլպլուն ընգեր էր ամփոռջ Դաջգաստան:

43 (306). ԱՐԱՐՈՅԻ\* ԵՐԳԸ

Խեղճ մշեցին մեռավ լալով,  
Օտար երկրներ ման գալով,  
Մեռավ թուրքի խարջը աալով,  
Ջարթնի՛ր, լա՛ո, մեռնիմ քվի:

Չուր ե՛րբ ման գամ պելու տոներ,  
Էրտամ ժողվիմ պըմ խեղճ գառներ,

\* Արարոն՝ Գեորգյան Առաքելն էր, Սասնո Բոնաշենի Կոռթեր գյուղից, որը «կարմիր իրիցու ավետարանը» ծոցում՝ մահ ու ասարսափ էր տարածում թուրքերի մեջ (Ծան. բանասացի):

Աարքիմ զիմ քախչա ու ծառներ,  
Ջարթնի՛ր, լա՛ո, մեսնիմ թվի:

Կրող տաներ քուրդ Հասոյին,  
Որ չսպաներ ջոջ Ասոյին,  
Իլաջ մնայ՝ Արաքոյին,  
Ջարթնի՛ր, լա՛ո, մեսնիմ թվի:

Էլեր դեսեր գալողն ո՞վ ք,  
Ռաջ Արաթոն քախտավոր ք,  
Կարմիր իրցանց՝ խասս գինվորն ք,  
Ջարթնի՛ր, լա՛ո, մեսնիմ թվի:

#### 44 (307). ԱՐԱՍԻ ԵՐԳԸ

Հայրենյայ դրոշագներ՝  
Մեզ հանեցին այս լեռներ,  
Շուն թուրքի դեմ գովելու,  
Հայրենիքս՝ ապատելու:

Սոսվոտ արշալույսին,  
Չորս կողմս՝ բաշարեցին,  
Չորս ցերեկ ու չորս գիշեր,  
Չորս հարյուր թշնամիներ:

Ես Արամն եմ, քաջ Արամ,  
Ինչ հանում են կախաղան,  
Թե որ հերոս չմեռնիմ,  
Հապա ինչո՞ւ ծնվեր իմ:

Մուսենի՛ դուր, ի՛մ մայրիկ,  
Պատրոնդաջ դո՛ւր, ի՛նչ քույրիկ,  
Ես գնում եմ գովելու,  
Հայրենիքս՝ ապաղելու:

#### 45 (308) ԽԱՍԻ\* ԽՍՐԻ ԵՐԳԸ

Լուսին չկար, մութ գիշերով՝  
Մի խումբ կերթար արագ - արագ,  
Տեսանք, որ քաջ Սահի խումբն էր,  
Չինված էին թուր նրանք:

Հրացանները նրանց ուսերին,  
Դրոշակները պարպել էին,  
Գնում էին Տաճկա սահման,  
Ազատություն՝ երգում էին:

Կյանքները՝ ազգին նվիրած,  
Կտրիճ Սանը՝ առաջ ընկած՝  
Գնում էին Տաճկա սահման,  
Թոչում էին ինչպես կրակ:

Նժույզները նսաած էին,  
Մերկ սրերը քաշել էին,  
Մութ անառող անցնում էին.  
Չինված էին՝ մուսիներով:

Երբ քաջ Սանը հասավ Բասեն,  
Թնդանոթներ արչակեցին,  
Հայ քաջերի մուսիներին՝  
Գնդակները գոռում էին:

\* Խանը՝ ղարաղաղի Թորգոմ խմբապետն էր, որը իր գինվորներով գնում էր սասունցիներին օգնելու (Ծան. բանասացի):

#### 46 (309). ԱՐՇԱԿԵՆԸ, ԵՂՐԱՅՐ

Հեղավոխական խումբ՝ գնում ենք Սասուն,  
Մեր հայ եղբայրներ մեզ են սպասում,  
Անդրանիկը քաջ յուր ընկերներով,  
Գուպե պատերազմ, կսպասե գարնան:

Մուտ է գարունը, շուտով կբացվի,  
Հայի խոսքը քաջ՝ շուտով կլսվի,  
Հայերը անվախ Լուրով են կանգնած,  
Հրացանն ուսերին, մերն է՝ Նոր տարին:

Հայ ֆիդայիներ՝ հոգով են միացած,  
Ֆիդայու ուժով գնում են առաջ,  
Արշավենք, եղբայր, գնանք Տաճկաստան,  
Ջարդենք թուրքերին՝ փրկենք վՀայաստան:

#### 47 (310). ԳՆՈՒՄ ԵՆՔ ԿՌԿԵԼՈՒ

Չենքերս քե՛ր, մայրիկս,  
Սուրերս քե՛ր, քույրիկս,  
Թե հայրենյայ չօգնենք,  
Աքա ինչո՞ւ ծնանս վմեզ:

Գնում ենք՝ օգնելու, կովելու, հաղթելու հույսով,  
Դեմ անել թշնամուն, քաջի պես՝ փրկել հայրենիք:

Իմ անուշի՛կ քույրի՛կս,  
Կանչի՛ր թող գա մայրի՛կս,  
Տա՛մ իմ վերջին բարես,  
Կանչում է՝ հայրենիքս:

Գնում ենք՝ օգնելու, կովելու, հաղթելու հույսով,  
Դեմ անել թշնամուն, քաջի պես՝ փրկել հայրենիք:

Բացվել է սուրբ դրոշակ,  
Գնա՛նք խմբվենք նորա աակ,  
Քաջ վարդանանց նմանակ՝  
Լինենք ազնիվ նահատակ:

Գնում ենք՝ օգնելու, կովելու, հաղթելու հույսով,  
Դեմ անել թշնամուն, քաջի պես՝ փրկել հայրենիք:

#### 48 (311). ԿՌԿԱՍԻ ԶԱՅԵՐ

Գովեցե՛ք աղեք, գովեցե՛ք քաջ - քաջ,  
Առյուծի պես կանգնենք թշնամու առաջ,  
Այս անգամին ալ՝ ցույց տանք թշնամուն,  
Թե ինչ է հայոց ուժն ու քաջություն:

Մեր առնախմբե՛ր, մեր նախնի քաջե՛ր,  
Մեզ են սպասում մեր սեզ եղբայրներ,  
Երդվում ենք մենք, մեր մերված սրտերով,  
Ուխտել՝ սուրբ արյունով փրկել Հայրենիք:

Հայոց օրհորդներ, փնջած տիկիներ,  
Օախե՛ր չեք վարդեր, առե՛ք գնդակներ:  
Կովկասի քաջե՛ր խմբեր պատրաստե՛ք,  
Քաջ Անդրանիկին օգնության հասե՛ք:

Գովեցե՛ք աղեք, գովեցե՛ք քաջ - քաջ,  
Առյուծի պես կանգնենք թշնամու առաջ,  
Արշավենք հայ քաջե՛ր, գնանք Տաճկաստան,  
Ջարդինք թուրքերին՝ փրկենք Հայաստան:  
Հայ կամավորներ՝ Իզդիր ժողվեցան,

Դրոշակներ պարզեցին, վեճեր ստացան,  
Չոռացին՝ հայ քաջեր, թոճե՛ք դեպ առաջ,  
Արյուն տարածենք, անցնենք դեպի վան:

49 (312). ԹՈՒԵՐ ՀԱՅԵՐ

Դատարանի դռներ դատով քայվեցան,  
Հայի մանկան սրտեր՝ հոլսով լցվեցան:  
Թոճե՛ք, հայե՛ր, թոճե՛ք դեպի սիրուն վան,  
Թոճե՛ք, հայե՛ր, թոճե՛ք դեպի Օովասար,  
Պատրաստվե՛ք հայ քաջեր՝ էրթանք Հայաստան:  
Հնչակյանի խուճր սարալով անցավ,  
Ձեռքներին հրացան, մեջքին՝ պատրոնդաշ,  
Թոճե՛ք, հայե՛ր, թոճե՛ք դեպի սիրուն վան,  
Թոճե՛ք, հայե՛ր, թոճե՛ք դեպի Օովասար,  
Պատրաստվե՛ք հայ քաջեր՝ էրթանք Հայաստան:  
Չուրբ Չուրջ երգեց վառ - վառ երգերով,  
Թշնամուն հալածեց իր փառուն սրով,  
Թոճե՛ք, հայե՛ր, թոճե՛ք դեպի սիրուն վան,  
Թոճե՛ք, հայե՛ր, թոճե՛ք դեպի Օովասար,  
Պատրաստվե՛ք հայ քաջեր՝ էրթանք Հայաստան:  
Ի վե՛ն հայե՛ր, ի վե՛ն և ի հրապան,  
Տաճկահայաստանից՝ կանչում է մի ջան,  
Լեռից - լեռ թնդում է անեղ հրաման՝  
Թոճե՛ք, հայե՛ր, թոճե՛ք դեպի Հայաստան,  
Թոճե՛ք, հայե՛ր, թոճե՛ք դեպի Հայաստան,  
Տաճկահայաստանից՝ կանչում է մի ջան:

50 (313). ՊԱՐԶԵՐ ԴՐՈՇԱԿ

Պարզե՛ք դրոշակ մեր հայ միության՝  
Լինի պահապան մեր ազատության,  
Միրո, մեր ազատության, սիրո, մեր ազատության:  
Ձայն տուր, ֆիդայի ինչո՞ւ ես լուում,  
Լուռ ու մուճ նստած՝ ի՞նչ ես մտածում,  
Ավա՛ղ, երկար մտածում, ավա՛ղ, երկար մտածում:  
Մեջքին դես-դեսակ մուսենի գրկած,  
Բադրոնաաշ մեճքին՝ մուսենին գրկած,  
Թունոտ գնդակներ շարվե՛շար գաբած,  
Սիրուն գրծքներին շարած, սիրուն գրծքներին շարած:  
Քանի այսպես է հայը խղճալի,  
Չինված պիտ սնա ամբողջ ֆիդային,  
Սիրուն, ամբողջ ֆիդային, անո՛ւշ, ամբողջ ֆիդային:  
Դէ՛, շարժե՛ք չեռքեր, սրեր շողշողուն,  
Թափենք մենք առաա օսմանցու արյուն,  
Թշնամու արյուն, դաժան օսմանցու արյուն:  
Դէ՛, շարժվե՛ք դղե՛րք, դեպի Միջագետք,  
Շոազույն դրոշ ծածանենք այնտեղ,  
Միրո՛ւն, ծածանենք այնտեղ, անո՛ւշ, ծածանենք այնտեղ:

51 (314). ՀԱՅ ՉԱԿԱԿ

Խլված էրգիրդ՝ սուրբ է, հա՛յ գավակ,  
Հայի արյունով ներկված ամեն քար,  
Այնտեղ քյոլրավոր նահատակներ կան,  
Չոհված՝ հավասաի ու ազգի համար:  
Ավեր էրգիրդ մի՛ մոռնա, հա՛յ գավակ,  
Ուր նախնիներդ՝ հիշաաակներ կան,

Այրված էրգիրդ մի՛ թողնիր ավեր,  
Մոխրի մեջ թաղված՝ հին կրակներ կան:

52 (315). ՄԵՆԵ ՊԵՏԵ Ե ԿՈՎԵՆԵ

Մենք պետք է կովե՛նք և ոչ լայ լինենք,  
Ազգի կորուստը՝ վենքով ե՛տ խլենք,  
Որ դառը լացենք, օ՛վ է լսողը,  
Մեզ յո՛ւշ շահ քերեց արյունքի ծովը:  
Այլևս չլա՛նք և ո՛չ լայ լինենք,  
Կրակված սրտով մեր գործը վարենք,  
Անվեհեր քաջին այս է պատկանում՝  
Միշտ ապատ մեռնել՝ կովի լայն դաշտում:  
Մոլի և երկչոտ տաճիկը թող լա,  
Երբ հայ քաջի դեմ՝ կովի դուրս կգա,  
Ամո՛թ այն հորը, որ չի մղում որդուն,  
Որ ազգի սիրուն՝ թափե՛ նա արյուն:

53 (316). ԹՈՂ ԲԻԼԲՈՒԼ ԵՐԳԷ

Թող քիլթու երգէ Մշո դաշտերում,  
Թող վարդը քայվի Ասանո լեռներում,  
Թող մեր թշնամիք սարսեն, սարսափեն,  
Չապան ոսոխներ ճաքեն, արաքվեն:  
Հայոց դաշտերը ծաղկունքով լցված,  
Հայու սերունդը՝ զպահե՛ աստված,  
Թող քիլթու երգէ Մշո դաշտերում,  
Թող վարդը քայվի Ասանո լեռներում:

54 (317). ՄԱՉՍԱՆՈՎԻ ԵՐԳԸ

Մազմանովը պգայ Խարսա վտանգը,  
Դեսամ. որ քայքայվեց ամբողջ քանագը,  
Յուր գոխքից քաշեց ադրջանագը,  
Իպուր անդ՝ պոհ ավեց յուր ազնիվ գյանքը:  
Մազմանովը գրեց Զյազում՝ քեզ փաշին՝  
Օլթին դադարգեցե՛ք մինչև հ ճաշին,  
Եթե կադարիք՝ ես չեմ անի բան.  
Եթե ոչ՝ գվառիմ Խարս, գանցնիմ Արդահան:  
Օլթվիցը եգավ այսպես հրաման.  
Հայերը օ՛վ ին, որ մեզ իշխան դառնան,  
Հայերը դվին այսպես հրաման՝  
Օլթի և Չարիշան, հայերի՛ն է Արդահան:  
Մազմանովը գրեց Զյազում՝ քեզ փաշին՝  
Սուլթանից գ՛կդրեմ՝ մինչև օմբաշին:  
Մազմանովի օդքեր մխով նալեցին,  
Մազմանովի դիագ տարան թաղեցին:

55 (318). ԴԱՎՈՐԻԳԻ ՉԱԿԱԳՆ ԵՄ ԽՈՐԹ

Դավորիգի գավազն եմ խորթ,  
Քաղքցու քես՝ չե՛մ թուլամորթ,  
Քաջի գավա՛գ, հայի որդի.  
Հին քաջ հայոց եմ մնացորդ:

Հա՛յ ախպրդիկ, քա՛ն ախպրդիկ.  
Դալվորդիգի վավագն եմ քաջ,  
Սպառութայան սիրոյն համար,  
Լ՛գեր ոյեր ինչ, առա՛ջ, առա՛ջ:

Եվ իմ խելոք, ջոջ բար՝ Սրէ,  
Սստվաչ հոկին լուսավորէ,  
Ինչ գ՛սեր միշտ՝ ախկադ արբէ,  
Քայց մի՛ ծռէ վիպ, հարգ մի՛ վջարէ:

56 (319). ԴԵՅ ՎԱՄՆ, ԴԵՅ ՎԱՄՆ, ԳԵՐԻ  
ՍԱՍՈՒՆ

Մ՛խ, հեյ վա՛խ, հեյ վա՛խ, գերի Սասուն,  
Ոնգեր էր սուգ ու վայնասուն,  
Նստել Սասուն անդեր գուլար,  
Հավքերն ալ հեղ՝ գու սգան:

Հեյ վա՛խ, հեյ վա՛խ, գերի Սասուն,  
Չմնաց էլ մարտ ու անասուն,  
Չմնաց էլ մարտ ու անասուն,  
Ոնգել էր սուգ ու վայնասուն:

57 (320). ԼԱՎ ԻՍԱՅԻ՛, ԴԱՄԻ՛Դ ՍՈՒԼԹԱՆ՝

Դուպրանդի գյուղ՝ վինվոր էլանք  
Չամպա էլանք, մուրովեցանք.  
Հուպվերա գնացինք, եղ դարչանք,  
Լա՛վ իմացի՛, Համի՛դ սուլթան:

Խաչադո՛ւր է իմ անունը,  
Վաղարշագի սուրպ արյունը՝  
Թախտոդ քանդիմ է՛ս գարունը,  
Լա՛վ իմացի՛, Համի՛դ սուլթան:

Խաչադուրը էլավ ի խաչ.  
Ոնգերներից Վարդանն էր քաջ,  
Կադարեց յուր սուգի բահանջ.  
Լա՛վ իմացի՛, Համի՛դ սուլթան:

Մանակերդի վադ՝ դրուտյուն,  
Լուր մը խրգեց քրաերուն, ՝  
Էզան լյվան Խըթթին,  
Քաղերապմ էր՝ հայ ազգին:

Քաջեր լյվան Խըթթին,  
Իմացավ չար թշնամին,  
Չուհաք դվեք պարունին՝  
Թող գը հըսնի յուր խումպին:  
Հայրենյաց քես՝ հա՛յր ունեք,  
Հայասանեն՝ մայր ունեք,  
Մի վախենա՛ք հայ քաջեր,  
Հիսուսի քես՝ դեր ունեք:

Հայե՛ր, շինե՛ք վարժարան,  
Ուր մեճ լյրեք հրացան,  
Խըբար դվեք դերության

\* Այստեղ հարակցված են երկու երգեր, բայց, քանի որ երգասացը երգում էր նույն եղանակով՝ հարկ համարեցինք թողնել միասին: Նման երևույթը բնորոշ է հատկապես, պարերգային կառուցվածքին. տարբեր երգեր երգում են նույն եղանակով, եթե բանաստեղծական չափը ներում է (Շան. կազմողի):

Հըր ե՛պ քանդին վՀայասան:

Երպ աղոտորան պածվեցավ,  
Սուաքել՝ վղեր հուսացավ,  
Խումպի դղել միածան՝  
Էլան ու լեռներ աարծան:

58 (321). ՎԱԹԱՆ՝

Վաթան անուշ պան է, էլ չեմ հեռանա,  
Կաթնատու մայրիգ ջան, քեզ չեմ մոռանա:  
Օ՛յ, օ՛յ, օ՛յ, օ՛յ ըն սարեր, օ՛յ, օ՛յ:  
Հայզոն շադ սիրուն էր, հայլին ինչ գաներ,  
Մեղրեմումէ մաղներ ուներ, մաղնիքն ի՞նչ կեներ:  
Օ՛յ, օ՛յ, օ՛յ, օ՛յ ըն սարեր, օ՛յ, օ՛յ:  
Մոա էգեղեցին՝ մումեր գվառեն, խաչեր գշողեն,  
Ձեռս տարա խորան մաղներս ի գտողեն:  
Օ՛յ, օ՛յ, օ՛յ, օ՛յ ըն սարեր, օ՛յ, օ՛յ:  
Կանցիլարի տուներ ուրկով տաշաչ են,  
Սալդատ տղի բոյն՝ խալմով քաշաչ էր,  
Օ՛յ, օ՛յ, օ՛յ, օ՛յ ըն սարեր, օ՛յ, օ՛յ:

59 (322). ՅԱՆ ԴՈՒՐ

Տաջկայ թվագանին,  
Գումարվաք կացիք, օ՛յ,  
Յա՛ն դուր, յա՛ն դուր,  
Սարիք ջամպը դուր:

Գումարվաք կացինք  
Հուկմատի տուռը,  
Հանին գարտածին  
Հայ ազգի ֆըրման, օ՛յ,  
Յա՛ն դուր, յա՛ն դուր,  
Սարիք ջամպը դուր:

\* Չինվորագրման երգ է:

(աշուղական եւ անհատ - հորինողների երգեր)

1 (323). ՍԱՍՈՒՆՑԻՔ

Հայաստանի քաջ, անդրանի՛կ պավակներ,  
 Ողջ հայության փառք ու պարծանք, սասունցի՛ք,  
 Ձեր պոհերին մատաղ, սո՛րբ նահատակներ,  
 Ողջ հայության փառք ու պարծանք սասունցի՛ք:  
 Ամեն մեզո՛ մեզ - մեզ Խութեցի Հովնան,  
 Սոյուծի կորյուն եք, հայրենյայ պաշտպան,  
 Կամ կմեռնե՛ք, կամ կմեռնեք նրան,  
 Օվ տա չեպ վիրսոկորա՛նք, սասունցի՛ք:  
 Անհովիվ ապրել եք՝ առանց պառակտել,  
 Սյծյամի հոռի պես՝ անվախ, անարգել,  
 Սպատ մենհայցել եք, հսկա լեռ դարձել,  
 Դուք չգիտեք բանտ ու կապա՛նք, սասունցի՛ք:  
 Ձեր յագերուն՝ սիրող և պաշտող թոշուն,  
 Բարձր ժայռի օւխին՝ հաստատել եք բուն,  
 Երբ գլսեք մաղնիչ, վատ հայի անուն,  
 Ջգում եք չեր մեջ պվա՛նք, սասունցի՛ք:  
 Կոխվը Ձեզ համար դարձել է մեզ խաղ,  
 Թուրքերու սրդի մեջ՝ շատ եք դրել դաղ,  
 Սրաքները չեր պապերից, չեպնից վաղ,  
 Կրել են քարո՞ ու հալածանք, սասունցի՛ք:  
 Զաջ Վարդանը՝ նահատակայ բանակով,  
 Ձեզ են դիմավորում փառք ու պսակով,  
 Մեսրոպ Մաշաոց, Ներսես, Պարթե Սահակով,  
 Ձեզ են տալիս մխիթարանք, սասունցի՛ք:  
 Ձեր մի փոքրիկ լուցկին՝ կվառե աշխարհ,  
 Հրդեհներ կգոյայցնի անկամար,  
 Ձեր մեզը լինի հարյուր, հարյուրը՝ հապա՛ր,  
 Դուք ունեք կա՛մք և գործող կյա՛նք, սասունցի՛ք:

2 (324). ՅՈՐ ՅԱՐՅՈՒՐ՝ ՏԱՐԻ\*

Յոթ հարյուր տարի այլոց լօր տակ.  
 Կոտորվել են, հայոց թիվը չի՛ պագսե,  
 Անմեղ, պարտադրված թշվառ հայ վիճակ,  
 Զաջել է շնչելով՝ շո՛ւնչը չի՛ պագսե:  
 Թնկուպ և ուրուրը հավին գսպանե,  
 Հավաքուն գզինե, յագեր կհանե.  
 Դասավերված կերպով թառին գշարե,  
 Թառից կանչող արքադղը՝ չի՛ պագսե:  
 Բազրատունյայ քաջ Սումբատը արշավեց,  
 Աերուժանին՝ աքք շամփուրով պսակեց,  
 Գայլ Վահանը՝ պարսյակ կորքին տապալեց,  
 Նման հայի ասնից՝ քաջը չի՛ պագսե:  
 Օվքեր հայ են ծնվել, թող լա՛վ հասկանան.  
 Պատառ հացի համար՝ չլնեն դավաճան:  
 Մարդը պատվով պետք է մղնի գերեզման,  
 Պատվով հայի տանից՝ հացը չի պագսե:  
 Աշուղ Ջիվան գրեց, ցավալի այսքան,  
 Թողեց ավանդություն՝ կարդան, հասկանան,  
 Աշխարհ եկած մարդիկ կուզան ու կերթան  
 Աշխարհի երեսից՝ հալը չի՛ պագսե:

\* Ձիվանու այս երգերը շատ սիրված են Թալինում և կատարվում են խնջուքների ժամանակ (Ծամ. կազմողի):

Անվախ, անվանի Մըտոն Սասունի,  
 Մի մեծ գյուղի ոես էր անվանի,  
 Օ՛վ կհանդգներ թեք աչքով նայեր,  
 Կամ միտքը դներ ինչ-որ մի բանի:

Երկար ժամանակ հսկում էր Մըտոն,  
 Գյուղի գործերով՝ օգնում էր Մարդոն,  
 Նրանք երկուսով յեռք-յեռքի տված՝  
 Ամուր բերդի պես թիկունքին կանգնած:

Խլոն մի քուրդ էր՝ բուրդից դաժան,  
 Օ՛վ կկանգներ դեմ մուսնու նրա,  
 Թալանում էր նա օրը ցերեզով,  
 Հայասպան էր նա՝ երեք հարյուրի:

Խլոն թալանում, առաջ էր անցնում,  
 Միայն իրեն էր անվախ, քաջ պզում,  
 Մի օր էլ եկավ Մըտոնին հասավ,  
 Ու այդ տեղից էլ՝ առաջ նա չանցավ:

Մըտոնի որդի՝ Հայկին սպանեց,  
 Մի հսկա լեռան ետև թաքնվեց,  
 Բայց հսկա լեռը քրոյին չփրկեց,  
 Մըտոնի պարկից՝ գետին գլորվեց:

4 (326). ՍԱՍՈՒՆՑԻՒՆԵՔ, ՍԱՍՈՒՆՑԻ\*

Հիշեցե՛ք միշտ գավառները Սասունի.  
 Վերածվեցին ավերակի, արցունքի,  
 Տառապանքի ուղի անցավ սասունցին,  
 Բայց թուրքի դեմ՝ ծնկի չեկավ սասունցին:

Հե՛յ, սասունցի՛ ենք, սասունցի՛,  
 Մերունդն ենք մեր պապերի,  
 Մենք չենք փոխվի, թեկուպ դուրեր էլ անցնի,  
 Բայց Թալինը՝ մեր Սասունին չի հասնի:

Երբ պարում ես դու քո պարը, սասունցի՛,  
 Հիացնում ես ողջ աշխարհը, հասկացի՛,  
 Պարիդ ուժգին, թո՛ղ որ յայնը շուտ հասնի  
 Մեր պապերի շիրիմներին, սասունցի՛:

5 (327). ԷՐՏԱՆՔ ԱՐՐ ԷՐԳԻՐԸ՝ ՄՈՒՉ

Էրտանք մըր էրգիրը՝ Մուշ,  
 Զաղինք պանջար, նուռ ու նուշ,  
 Ուղինք քաղցրիզ մանանա,  
 Խմինք քաղ հրերն անուշ:  
 Տարոնցու էրգիրն էր Մուշ,  
 Մուշ՝ պուրդից էր անուշ,  
 Էլնինք սարերն ի Սասուն,  
 Ուր քաջեր կան դուրացուն:

Մարութա լեռնիդ քարոդ,  
 Մնացինք՝ էրգրին գարոդ,  
 Հայերու սրգիզ յարոդ,  
 Մասնու գիկեր արյան հոդ:

\* Այս և «Անվախ Մըտոն» երգերի տեքստն ու մեղեդին հորինել է Գառնիկ Դակոբյանը (պապերը գարթել են Սասունի Աղբիկ գյուղից):

Տարոնի դաշտավայրեր,  
Մուշն ու Մասուն՝ եղբայրներ,  
Վասպուրական և Անի,  
Ձեզ ո՛չ որ չի՛ նմանի:

6 (328). ԳՈՎԷ ԱԼԱՇՎԵՐՏԻ

Հե՛յ Ալաշկերտ, կեյի պերան,  
Զու դաշտերը չայիր - չիման,  
Աղբյուրներդ սառ, քաղցրահամ,  
Արյոյք օ՛վ է հիմա պաշտպան,  
Ուշյիլիսեն և Նպատ լեռ,  
Թողեցի՛նք մնաց թուրքի յեռ,  
Անունդ կմնա անմեռ,  
Օղտ անուշ, խիստ էր յմեռ:  
Փայաէ գութան, հորիկն էր եզ,  
Գոմեշներով գքանդենք սեզ,  
Կաթնահամ խանդոխն ու կոջդեզ,  
Աշագննրդ՝ խոնարհ ու հեզ:  
Դո՛ւ, անմոռաց մեր Ալաշկերտ,  
Հեռու ընգար, կորար անհետ,  
Էլ չենք տեսնի քեզ, Մուրա՛դ գետ,  
Մեր յեռ չմնաց էլ սուր ու նետ:  
Կարողով եմ ես երգում քեզ,  
Որքան գովեմ՝ դարձյալ արժես, /  
Դու նման ես ծաղկած պարտեզ,  
Արյոյք օ՛վ է տիրացել քեզ...  
Ալադա՛դ, հայոց ծաղկաց լե՛ռ,  
Ծաղ եմ կարող, մտքումս ես դեռ.  
Ալաշկերտի և Վանի մեջ՝  
Ախթամարին դարձել ես տեր:  
Ալաշկե՛րտ, Բագրևանդ գավառ,  
Մնաս՝ թշնամուղ հոգեառ,  
Դալար ես, ինչպես բարդու ծառ,  
Տոնոյանիս տա՛ր, գիրկդ ա՛ն:

7 (329). ԻՆՉ ԱՆԻՍ ՅԼՍ

Ձքս Թումասն իմ՝ Գորնգեզ կեղայի,  
Սադ կիդ գողջովեցավ, յքս մննագ մնացի:  
Ի՞նչ անիմ յքս, անդեր իմ յքս, ջիգարս ի յարող,  
Գարո՛դ իմ յքս Ասանա սարերուն,  
Գարո՛դ իմ յքս Ասանա բաղ ախարներուն,  
Գարո՛դ իմ յքս Ասանա ծորերուն,  
Ա՛խ, ջիգարս ի յարո՛ղ:  
Մննագ իմ յքս, անդեր իմ յքս,  
Միան՝ ասվաչն ը ընչի բաշտաբան:

8 (330). ԻՆՉ ԱՆԵՍ

Օդարուտյան մեճն ընգաչ անչանոթ.  
Բախտս ընչի քարին յպեց, ի՞նչ անեմ,  
Օ՛, փափագս թերի մնաց իմ սրդում,  
Չահել կյանքս փջայուցի, ի՞նչ անեմ:  
Առանց ի ուսմունք՝ սաաար չէղա հայ ազգին:  
Մահս եզավ, գլխիս վերս կայնեցավ,  
Չահել կյանքս էժան գնով չախվեցավ,  
Իմ աշխադաչ օսկին, արչատն ի՞նչ անեմ:

9 (331). ՊԱՐՈՎ ԵՍ ԷԳԵԼ

Պարո՛վ ես Էգել, ծիչեռնա՛գ սիրուն,  
Ի՞նչ յուր ես բերել պանդուխտ հայերուն,  
Ավա՛դ պանդուխտ հայերուն:  
Ծինի՛ր քո բույնը Մշո դաշտերում,  
Ավա՛դ Մշո դաշտերում:  
Թող երգդ ինչի՛ Մասմա լեռներում,  
Ավա՛դ, Մասմա լեռներում:

10 (332). ՀԱՅԿԱԿԱՆ ՀՈՂԵՐԸ

Երբ որ կարծանվեց չընաղ, մեծ Անին՝  
Հողերը մնացին թուրքերի յեռքին,  
Հայկական լեռները, հայկական պարը,  
Մասուն, Մուշն ու Վանը, հայկական հողերը:

Կորել է հովիվը, փովել է հողը,  
Թուրքին է մնացել հայկական արողը,  
Հայկական պարը, հայկական Մասիսը,  
Մասուն, Մուշն ու Վանը, հայկական հողերը:

Որտեղ մեզ հա՛յ կա, եկե՛ք գուրգուրենք,  
Մեր պապական հողին՝ դիրություն անենք,  
Հայկական լեռները, Հայկական պարը,  
Մասուն, Մուշն ու Վանը, հայկական հողերը:

11 (333). ԱՆԻ

Էզը դեսը պքի՛ գերտամ.  
Լալով գքսիս՝ պարո՛վ էրտամ,  
Աստվաչ սիրի՛ս, չմոռանա՛ս,  
Մասիս սարին երբ մողենաս, ա՛խ Անի՛:  
Կացեք ըսեք Արարադին՝  
Նստի գիւը քու խեղջ Անին,  
Այն ժամանագ նա կգթա,  
Կասի՛ հերիք լա՛ս իմ Անի, ա՛խ Անի՛:  
Նման ես քրում ցախցախված նավի,  
Դեսնողը՝ չի օկնի, միայն գցավի,  
Մնացել ես գիսաքանդ, ավեր Անի՛, ա՛խ Անի՛:  
Վանքերդ էղան հողին հավասար,  
Նորոգելու էլ չի լինում հնար,  
Մնացել ես գիսաքանդ էրգար ժամանագ,  
Անի՛, Անի՛, անբախտ Անի՛, ա՛խ Անի՛:  
Մեզ լացողը քեզ ի՞նչ անի:  
Անի՛, Անի՛, անբախտ Անի՛,  
Մեզ խեղջ հայը քեզ ինչ անի, ա՛խ Անի՛:

12 (334). ԱՄՍ, ԱՄԲԵՐՂՆ ՈՒ ԱՐԽԱՇԱՍԸ

1

Ա՛խ, Ամբերդն ու Արխաշանը.  
Մեծ բերդն է քու նշանը,  
Տիրում էր Ամբատ իշխանը.  
Ո՛ր են հայերդ, Ալազյա՛ւ:  
Մառախլապաա քու գագաթը,  
Կրծքիդ անուշ, համեղ կաթը,  
Օծում էր Աշոտ Երկաթը,  
Ո՛ր են հայերդ, Ալազյա՛ւ:

Մառիսն է քու ցավագին,  
Ջրկվել է հայոց թագից,  
Այրվում է իր կրակից,  
Ո՞ր էն քաջերդ, Ալագյա՛ս:

13 (335). ԱՄԲԵՐՂՆ ՈՒ ԱՐԽԱՇԱՆԸ

2

Ամբերդն ու Արխաշանը,  
Չաքույդ բերդն էր մեծ նշանը,  
Տիրում էր Սմբատ իշխանը.  
Ո՞ր է արծիվդ, Ալագյա՛ս:

Մառախլապատ քո գագաթը,  
Կրծքիդ բուսած՝ մեղր ու կաթը,  
Օծել էր Աշոտ Երկաթը,  
Հայաստանի մա՛յր, Ալագյա՛ս:

Արարատը՝ քեզ ցավակից,  
Ջրկված է հայի ցավակից,  
Վառվում է անշեջ քո կրակից,  
Կուրծքդ՝ հրաքո՛ւխ, Ալագյա՛ս:

14 (336). ՄԻՐ ԵՆ

Նոսե՛ք, Արաաշա՛տ ու Գլի՛ն,  
Արքա - հպորներդ ո՞ր էն,  
Ձեր անմատչելի քաղաքների,  
Արթուն դոնապաներն ո՞ր էն:

Տառապյալ մեր հայ ժողովուրդ,  
Եկե՛ք մեր հայերին հիշենք,  
Պողպատակուռ մեր քաջ ազգի,  
Հայոց նախնիներին հիշենք:

15 (337). ՀԻՇԵՆՔ\*

Հե՛յ ժողովուրդ, հիշե՛նք,  
Մեր քաջերին հիշե՛նք,  
Պողպատակուռ հայոց ազգի,  
Հայոց պաշտպաններին հիշե՛նք,  
Հիշե՛նք մեզ - մեզ առյուծներին՝  
Մամիկոնյանց մեծ Վասակին,  
Հուշեր թողեց Անհուշ բերդում,  
Արշակ թագավորի՛ն հիշենք:  
Պապ թագավոր երախտապարա,  
Օրենքն ու կարգ՝ հիմնեց հաստաա,  
Թշնամյաց դեմ՝ ընգավ թակարդ,  
Ատուհի գնդի պադիվն հիշե՛նք:  
Հիշե՛նք Մուշեղ Կորավարին,  
Հայ ազգության՝ մեծ պաշտպանին,  
Մամիկոնյան քաջ վարդանանց՝  
Աոցա գերեզմաններն հիշե՛նք:  
Հիշե՛նք Սմբատ Բագրատունուն,  
Ու ծախված Մերուժանին.  
Անե՛ծք հայոց դավաճանին,

\* Այս երգը հորինել են ապարանցի Վոլոդյան և Պճուկ Հարությունյանը (Թալինի Ն.Սասնաշեն գյուղից) Անդրամիկ գորավարի 100-ամյակի առթիվ (Օսմ. երգասացի):

Ազգասեր Սամվելին հիշենք,  
Հիշե՛նք Չագիկ թագավորին,  
Ափսո՛ս կործանվեցավ Անին,  
Անե՛ծք դժոխք վեսա Մարգպին,  
Վահրամ Պահլավունուն հիշե՛նք:  
Հիշե՛նք մեր Աշոտ Երկաթին,  
Հուշարչանն է՝ Սևան Կղզին,  
Կյանքը Կոհեց հայոց ազգին,  
Քնորգ Մարգպետունո՛ւն հիշե՛նք:  
Դավիթ քեզի պես Կորավար,  
Պետք է հիշե՛նք մենք դարեդար,  
Մխիթարի նման արդար,  
Հայ Կորավարներին հիշե՛նք,  
Կռիվ տալով՝ անցան տարիք,  
Անհա՛ղթ մնաց քաջ Անդրանիկ,  
Հերո՛ս էր, քա՛ջ, գոտեմարտիկ,  
Նրա հարյուրամյակն հիշե՛նք:  
Անցան տարիներ ու դարեր,  
Ծաղ արյուն թափեցին հայեր,  
Հանգիստ ննջեք՝ նախարարներ,  
Մնացած քաջերին հիշե՛նք:  
Հիշենք Մովսես Սորենայուն,  
Մեծ պատմաբան և իմաստուն,  
Ներսես, Սահակ ու Փարպեցուն  
Սուրբ մեսրոպյան առուերն հիշե՛նք:  
Հավերժ սիրող՝ Մայաթ Նովին,  
Արովյանին, Թումանյանին:  
Ապարանցի Վալոդյայի  
Էավ հորինած երգն հիշենք,  
Օտարության մեջ Պճուկիս՝  
Շղանակած երգը հիշե՛նք:

16 (338). ԿԱՆԱ - ՂԻՔԻ

Քո գողմերը ժեռ քարերում,  
Բազմապեղ ես սեզ սարերում,  
Դաշա ու վայրդ Կուտ անառում,  
Գովելի ես՝ Կանա - դիքի:  
Էդ մեծ ժայռից հոսող աղբյուր,  
Ծառ գիտունների սրդին ես դուր,  
Քո խմողն էլ չի գշաանա.  
Գովքի արժան՝ Կանա - դիքի:  
Ծառ մարդիկ են եկել անցել,  
Ամուր բերդեր են կառուցել,  
Նքադագին են հասցրել,  
Քաջերի առ՛ն, Կանա - դիքի:

17 (339). ՕՂՈՒՄ ԹՈՂՈՂ ԳՈՂՈՉ  
ԹՈՂՈՒՆ

Օղում թոշող գոռոպ թոշուն,  
Ճանապարհի հարզն ի՞նչ գիտե,  
Իր պաաիվը չիմացող մարդ՝  
Ուրիշների հարզն ի՞նչ գիտե:  
Քաթանից շապիկ հագնողը,  
Արեգակի դեմ պարզողը,  
Հանկարծ՝ քեզության հասնողը,  
Ծառաների հարզն ի՞նչ գիտե:

Օվ չի տանջվել, արտ չի վարել,  
Սեղանը լի հաց չի փոել,  
Օվ որ մեղվի հոգս չի քաշել,  
Քաղցր մեղրի հարգն ի՞նչ գիտե:  
Մարդս՝ զիդէ պարպ խոսաւ,  
Կյանքի ծովի մեջին լողաւ,  
Ագռավ կուպէ՝ սոխակ դառնաւ,  
Կարմիր վարդի հարգն ի՞նչ գիտե:

18 (340). ԻԶՈՒՐ. ԻԶՈՒՐ\*

Անթիվ տխուր տաղ եմ լսել,  
Արտիս հանդեպ դավ եմ տեսել,  
Հապար վերք ու ցավ եմ քաշել,  
Մ՛խ, բոլորք իզո՛ւր, իզո՛ւր:  
Արդար հողը մշակեցի,  
Վարդ ցանեցի՝ փուշ քաղեցի,  
Անկեղծ սրտով ում սիրեցի,  
Նա ինչ ատեց, իզո՛ւր, իզո՛ւր:  
Ամուսնացա, բսվա տխրեցի,  
Չավակներուս փայփայեցի,  
Չախորդութեան հանդիպեցի,  
Ինչ մոռացան, ավա՛ղ, իզո՛ւր:  
Աղ ու հացով սեղան քացի,  
Ինչ կյուր եկան ապգ, դրացի,  
Երբ փոխադարձ այցելեցի,  
Դուռ չքացին, իզո՛ւր, իզո՛ւր:  
Անթիվ արցունքներ եմ սրբել,  
Հապար վերք ու ցավ եմ բուժել,  
Երբ վերքերս նոր էր քայվել՝  
Չբուժեցին, իզո՛ւր, իզո՛ւր:  
Ապառաժից քար տաշեցի,  
Քրտինքովս՝ շաղախեցի,  
Չարչարվեցի, տուն շինեցի,  
Այն էլ քանդվեց, իզո՛ւր, իզո՛ւր:  
Դահիճ մարդիկ վանդակ դրին,  
Ամեղ մարդկանց թակարդեցին.  
Երբ շատերին արչակեցին,  
Ինչ թակարուին, ավա՛ղ, իզո՛ւր:  
Ինչ եղել եմ՝ կմնամ նույնը,  
Ես չեմ փոխի սրտիս գույնը:  
Պայծառ հոգուս պետք չէ թույնը,  
Թեկուզ կասեմ՝ իզո՛ւր, իզո՛ւր:  
Պանդուխտ սրտիս վերքը խորն էր,

Ջահել կյանքիս օրն էր կորել,  
Զախտը ինչ մատենց բանտը մութ,  
Կյանքս անցավ գուր, անօգուտ:

19 (341). ԱՐՐ ՕՐԱՆԵՍ

Ղամաթ Էրեց, ասսու բան էր,  
Գրի ծոցա դադաստանը.  
Սուրբ Կարարեդ՝ Դադիվան էր,  
Լղա ղոնաղ՝ սըրք Օհանես:  
Ղոնաղ Էղա, մադաղս առա,  
Քանի գենտան իմ՝ յեմ ծառա:  
Դու քար ունիր, գարմիր ծածկուց,  
Ղուրբան իմ օջաղիդ քարին:  
Ղուրբան իմ օջախիդ քարին,  
Ի՞նչ գբադմիր Մուշա սարին:  
Ի՞նչ գբադմիր Մուշա սարին,  
Օխտ անասուն ղուլուղ դարին,  
Օխտ օթախ էր սըրք Օհանես:  
Օխտ օթախ էր, դեր չար գիշա,  
Մի տուն գումբեթ դվիր ղուշա,  
Լուսին ղուրս գուկա՝ հը՛մ իշա,  
Լուսաշաքի՛կ սըրք Օհանես:

20 (342). ԲԱՆԻՐ ԴԱՐԸ ԽՉԼԹԱՍՈՒՐ

Բանիր դարը Խալթամուր,  
Ըսի՛ Էնիմ առուտուր,  
Նքաղագս ընցավ իզուր,  
Էզան գերան ու կնացին:

Չորս փուղ բանիր առ դարը,  
Ըսեցի՝ Էրգու մանեթ քար ը,  
Խալթամուրցիք անփարը,  
Էզան գերան ու կնացին:

Բանրիս մեճ՝ չկեր ժածիգ,  
Խալթամուրցիք միչ ու բզդիգ,  
Իմալ Լուգաշենը մժիգ՝  
Էզան գերան ու կնացին:

Արիվ տիբավ Կողքը սարին,  
Ասղ բանիրս՝ յաղմա արին,  
Իմալ՝ Էջը ընգներ կարին,  
Էզան գերան ու կնացին:

\* Երգը հորինել է Լ.Նասնաշենցի Պճուկ Հայրությունյանը: